

# ՊԵՐՃ ՊՈՅԵԱՆՑ

ԵՒ

## ՆՈՐԱ ՎԷՊԵՐԸ

Ուսումնասիրութիւն

Ն. ՔԱՐԱՄԵԱՆՑԻ

Է.

ԵՒ ՈՒ ԱԾ Ա Ղ Ի Կ,

Պռօշիանցի վէպերից ժամանակագրական կարգով երկրորդն է «Կռուածադիկ»-ը, որ նրա առաջին փորձն է պատմական վէպ դրելու: Պատմական վէպն իբրև մատենագրական արտադրութեան մի ձև՝ շատ հին ծագումն ունի: Մեզ հասել են Քրիստոսից հինգ դար առաջ հեղինակած պատմական վէպեր, որոնց նպատակը՝ սկզբնական վիպասանների հասկացողութեան և ցանկութեան համաձայն՝ մանկավարժական էր. մի օրինակ միայն թող բաւական լինի լիչելու: Յունական պատմագիր և փիլիսոփայ Քսենոփոնը գրեց իւր Կիւրոս պէգի կամ «Պատմութիւն խրատու Կիւրոսի» (հայերէն թարգ. Գաթրըճեանի 1843 թ. Վիէննա) պատմական վէպը, ուր նա կամենում է մի գաղափարական իշխան ներկայացնել, որ կրթւած էր Սոկրատեան փիլիսոփայական ուղղութեամբ: Քսենոփոնի հերոսն է մեծն Կիւրոս, որի դաստիարակութեան պատմութիւնն է անում փիլիսոփան հիմնւելով պատմական իրողութիւնների վրայ: Յունական գրականութեան մէջ պատմական վէպը չաջորդ ժամանակներում առաւել ևս զարգացաւ. քանի պատմագրութիւնն ընկնում էր, այնքան զարգանում էր պատմական վիպագրութիւնը, որ մանաւանդ ծաղկեց Աղէքսանդրիայի դպրոցում: Ծածօթ օրինակներով խօսելու համար՝ լիչեք այս դպրոցի մի գործը, որ մեր գրականութեան մէջ ծանօթ է հինգերորդ դարուց սկսած և որ որոշ ազդեցութիւն է արել մեր պատմագիրների վրայ: Մեր ակնարկած վէպն է «Պատ-

մութիւն Աղէքսանդրի» կոչւածը, որ արդէն հին պատմական վէպից տարրերու մէջ է իւր նպատակով և ձևով. սորա մէջ առաւել տիրապետողն է երևակալութիւնը՝ փոխանակ փիլիսոփայութեան և պատմութեան, որով և աւելի մօտենում է բանաստեղծութեան:

Պատմական վէպի ծաղկման դարը սակայն իրաւամբ համարում է վիպագրութեան ուսմանական (ուսմանտիք) կոչւած շրջանը: Այս շրջանի մեծամեծ աստղերը փալկել են մեր դարու առաջին կիսում, ինչպէս Վալտեր Սկոտտը, Հիւգօն (Նոտր-Դամ դը Պարի), Դիւմա աւագն և այլն: Պատմական վէպի իսկական ներկայացուցիչը կարող է իրաւամբ Վալտեր Սկոտտը համարել, որ իւր բազմաթիւ վէպերի մէջ, որոնց նիւթն է միջնադարեան պատմութիւնը, ինչպէս ասում է մի նշանաւոր գրադէտ, «ոչ թէ կենդանացրած մի հնախօսութիւն է տալիս, այլ ներկայացնում է մեզ մի անցեալ, որ իւր երևակալութեան մէջ ապրում էր աչնպէս պարզ, ինչպէս ներկան: Ինչքան առանց անդրադառնալու նա ինքն աչն անցած ժամանակներում ապրում էր, նոյնչափ աւելի որոշ և պարզ ստեղծում էր նրա երևակալութիւնը տեսարաններ և տարադներ, և նոյնչափ աւելի կենդանութիւն էին ստանում նրա հերոսները: Սկոտտի անցեալ դարերու տիպերը բոլորովին տաքարիւն, զգալիւն, կենդանի, հոգեբանօրէն ճշմարիտ են: Իսկ նրանց կեանքի հանգամանքները ստեղծում էր ինքը բանաստեղծական զւարճութեամբ՝ օգտուելով կեանքի անհամար երևութիւններից» Ահա այսպիսի կատարելութեան էր հասել Եւրոպայում պատմական վէպը, երբ մեր գրականութիւնը դեռ խանձարուրում էր: Թէ ինչպէս այդ մանուկ մատենագրութիւնը դուրս եկաւ իւր առաջին շրջանից, արդէն անցեալ դուրսներից մէկումը համառօտակի շօշափեցի: Եւրոպայում տեմենք նրա ձգտումների և արտադրութիւնների աչն փորձերը, որ վերաբերում են պատմական վէպին: «Վէրք Հալաստանին» մի կողմով պատմական վէպ է, որովհետև անմահացնում է պատմական մի նշանաւոր ժամանակի կեանքը, — պարսկական իշխանութեան ուսականի փոխւիրը: Աբովյանի իսկական աշակերտը, Պերճ Պոօչեանցը, որի բանաստեղծական գրականութեան ասպարէզ մտնելը «Վէրք Հալաստանի»-ի ընթերցման հետեանքն էր, պիտի անշուշտ ընկնէր և այդ եղբերգի նիւթի աղղեցութեան տակ: Կարծես թէ Պոօչեանցի գործերի ժամանակագրութեան մէջ մի անկարմարութիւն կալ. բնական կարգը կարծես պահանջում էր նախ «Կուռածաղկի» հեղինակութիւնը և ապա «Սօս և Վարդիթերի»: Բայց այդպէս չէ:

Գրեթէ տասը տարի լետոյ միաչն համարձակեց Պոօչեանցը ձեռնարկելու աչն գործին, որով պէտք է իւր վարպետին նմանէր: Այս նմանդութիւնը աչնքան պարզ է և աչնքան արտաքին, որ առաջին հալեացքից իսկ աչքի է ընկնում: Բաւական է միաչն վիշել, որ Պոօչեանցն էլ իւր վիպասանութեան նիւթը ճիշդ աչն ժամանակից է առնում, որից առել էր Աբովյանը, — պարսկական տիրապետութեան վերջին հողեվարքի

ժամանակից, եթէ Արտվանը ընտրել էր հպկական հպատակութիւնը փոխելու ձգտումն ունեցողներէ շրջանից մի երկրորդական կամ մինչև անգամ մտացածին հերոս, Պոօշեանցն ընտրում է ալդ պատերազմի առաջին հերոսին, Ներսէս Ն. կաթողիկոսին:

Մեր գրականութիւնը («Վոռածաղկի») հրատարակումից չետոյ տւել է բաւական թւով պատմական վէպեր. նոյն իսկ Պոօշեանցը մի երկրորդ փորձ է արել իւր «Շահէն» վիպասանութեամբ: Թէ ինչ զարգացման աստիճանի է հասել ալդ մեր դեղարւեստական գրականութեան ճիւղը և ինչ մոլոր կամ ուղիղ շահողներով է ընթացել, ուրիշ անգամի թողնելով, ալժամ ծանօթանալը («Վոռածաղկի») բովանդակութեան հետ և տեսնենք թէ, իբրև առաջին փորձ հեղինակի, ինչքան չաղողակ է:

«Վոռածաղկի»-ն առաջինն էր Պոօշեանցի՝ («Վոռեակի») դադարումից չետոյ՝ երկրորդ անգամ «Փորձ» հանդիսի երեսն գալով մատենադրական ասպարէզ հանած վէպերից: Այս վէպի 1878 թւին եղած արտատպութիւնը 1) նւիրած է օրիորդ Աշխէն Գօլգեանցի լիշատակին, որ վէպի գրելու սկզբնապատճառն է և նրան ալդ անունը տուողը. բացի գրանցից, ինչպէս իմանում ենք լառաջաբանից, օրիորդ Գօլգեանցը «խորհուրդն եր է տւել հեղինակին Վոռածաղկին վերաբերեալ» (լառաջաբան եր. ա.):

Ահա թէ ի՛նչ է կամենում տալ հեղինակը «Վոռածաղկի» միջոցով. «Տարի և կէս սրանից անց, ես լպտնեցի քեզ (օր. Աշխէն) իմ ցանկութիւնս՝ սրանից մի դար չառաջ իմ քաղցր հալբենիքում գտնուած մեծ մարդկանց չլիշատակներն անմահացնելու,— որոնց մէջ գլխաւոր տեղերից մինն անպատճառ պատկանելու էր Հալոց ազգի գլուխ երջանկաչիշատակ Ներսէս Ն. իմ հալբենակից Աշտարակեցի կաթողիկոսի մանկական անմեղ տարիներին» (լառաջ. սկիզբն):

Հեղինակի ցանկութիւնն է ուրեմն տալ Աշտարակ դիւզում ծնած հպկական մեծ մարդկանց պատմութիւնը և անմահացնել նրանց լիշատակը: Լսենք ալժամ թէ ինչպէս է նա ձգտել հասնել այս նպատակին: «Վոռածաղկիս նիւթը, ինչպէս քնթերցողը կը տեսնի, առած է Աշտարակու դարով չառաջ կեանքից: Գրաւոր աղբիւրներն ես քաղել եմ Սիմէօն բաղամաշխատ կաթողիկոսի տպուած աշխատութիւններից և, պ. Յարութիւն Շահազիւղեանցի շնորհիւ, Ներսիսի գրութիւններից: Իսկ իբրև անսպառելի աղբիւր՝ եղել են ի մանկութենէ մինչև վերջին տարիներս Աշտարակի՝ իմ ծննդեան տեղի՝ ծերունիներից լսածներս, որոնցից շատերը խորին ծերութեան հասած, ականատես ևն եղել շատ իրողութիւններին: Ի՛նչ կարծիք, որ վիպասանութեան պալմանին համաձայն,

1) «Վոռածաղկի» աղբալին վիպասանութիւն. Հեղինակութիւն Պերձ՝ Պոօշեանց Աշտարակեցւոյ, 1878. Թիֆլիս.

Թող տուած է նոր արկածքներ և նոր անձներ և ստեղծելը: Ժամանակագրական ճշդութեանը ևս չեմ ուզեցել և չէի էլ կարող անաչառապէս հետևել: Ներսիսի ծննդեան տարիքը մինչև այսօր պատմաբանական փաստերն անզամ տկարանում են իսկապէս հաստատել: Մանկական չի շողութեան մէջ տպուածներն այսօր հալ ընթերցասէր դասին և մեռելում: (Համեմատիր սրա հետ Նաև գլ. ծէ. եր. 333): «Ահա այս իմ մեծ տասին ենք պարտական, ընթերցող, ևս և դու. ևս գրելով, իսկ դու՛ կարգաւով»:

«Կուռածաղիկ»-ը, որ 344 ութածայ երեսից և 58 գլխից բաղկացած մի վիպասանութիւն է, և որի մէջ հեղինակը կամենում է անմահացնել Աշտարակցի ալն մեծ մարդկանց վշտաակը, որ ապրում էին 18-րորդ դարու վերջին և 19-րորդի սկզբում, հետևեալ բովանդակութիւնն ունի:

Աշտարակ գիւղի Շահաղիզեան-կամսարական ցեղի երեք Նշանաւոր տների ներկայացուցիչները գործունէութեան ժամանակն է կատարում անցքը: Կամսարական մի տան ներկայացուցիչն է գիւղի քահանայն՝ Տէր-Յարութիւնը, որ մի ճշմարիտ քրիստոնեայ և հալ քահանայի տիպար է. նա Աստուծոյ պաշտօնեայ է թէ իւր վարքովն և թէ իւր խօսքով: Նրա կիներն, Սուսամբարը, մի ճահապետական և բարեսիրտ հալ գիւղական մար է, որ հաւասարապէս կարողանում է սիրել թէ իւր որդոց և թէ ուրիշ որբերին: Միւս կամսարական տան գլուխն է Գէորգ խալֆան՝ հարուստ, հիւրասէր, առատաձեռն և հասարակութեան ցաւերին դարման տանող գիւղի իշխանը, որից հաւասարապէս պատկառում են գիւղացիք և չարքում են թէ պարսիկ տիրապետողները և թէ բարձր հալ հոգևորականները: Սրա կիներ էր Խորիշան խանումը՝ Պռօշեանց ազնւական ցեղից: Սա չետ չէր մնում բարեգործութեամբ իւր ամուսնուց. նա «բոլոր որբերի և անտէր քաղցածների մալրն էր»: Գէորգ խալֆէն ներկայացրած է իբրև օրինակելի հարուստ, խելօք (մինչև անգամ քաղաքագէտ), բարեսիրտ, արդար, գործունեայ գիւղացու և ճահապետական հօր և ամուսնու տիպար, իսկ Խորիշանը՝ հաւատարիմ, բարեսիրտ, առատաձեռն և աշխատասէր գիւղական տան տիկնոջ և քնքոյլ ամուսնու տիպար: Սրանց համապատասխանում են Տէր-Յարութիւնը և իւր կիներ՝ մի զանազանութեամբ միայն, որ Տէր-Յարութիւնը որդիք ունէր, որոնցից մէկը՝ Թորոսը վիպասանութեան գլխաւոր հերոսն է, իսկ Գէորգ խալֆան անորդի էր. նա «բոլոր գիւղին և գաւառին հալրութիւն էր անուս» (եր. 22): Սոքա Եկուածաձաղիկ» իդէալական տիպարների գլխաւորներն են:

Կամսարական-Շահաղիզեանց երրորդ տան գլուխն ու ներկայացուցիչն էր Ղևոնդ աղէն: Սրան արդէն ի մանկութենէ ճանաչել էր իւր հայրը իբրև մի վնասակար և չար մարդ. ուստի գիւղի ամրոցի (տախտակապատ ալրերի) մուտքը ծածկել էր նրանից: Ղևոնդը փառասէր, շահասէր, չար և դաւաճան մարդ էր: իւր անձնական

չահից և բաւականութիւնից առաւել ոչինչ նշանակութիւն չունէր նրա համար՝ ոչ ազգութիւն, ոչ հաւատ, ոչ հասարակութիւն և ազգակցութիւն, մինչև անգամ ընտանեկան սէր և հպարական ու ամուսնական գութ: Սակա՞ն դեռ ևս ընդունակ էր ընկճելու մարդկային ամենասկզբնական և մեծ դգացումներին, իւր ամուսնու և աղջկան սիրուց. այս ընկճումն սակա՞ն բուսական էր: Սրա պակասութիւնները և թուլութիւնը չունէր ընդհակառակն իր ընկերը, Տէր-Մեղքիսէթը. սրա շահասիրութիւնը, փառասիրութիւնը և բնական չարամտութիւնը սահման չէր ճանաչում. նա ընդունակ էր մինչև անգամ իւր Աստուծուն և եկեղեցուն դաւաճանելու. Գաֆթառեհնց Տէր-Մեղքիսէթը անհամակրելի կերպարանք ունէր, խորամանկ էր, գող, ստախոս, կեղծաւոր, քծնող և ալչն, (ա՛ր ժանտախտ էր Աշտարակցիներին համար, որից ամենքը խորշում էին, որից զզւելու ամեն մինը իրաւունք ունէր, բայց որ չէին կարողանում) (Գլ. Ժգ. եր. 90).—Ղեռնդի կիներ, Համասփիւռը, իւր ամուսնու հակապատկերն էր, բարեսիրտ և ազնիւ, կարեկցող, ամենի ցաւին և իր վշտերն լռութեամբ տանող, մի կատարեալ կենդանի նահատակ իւր մարդու ձեռին: Սրա նման չէր Տէր-Մեղքիսէթի կինը, որ իւր ամուսնու զուգակից ընկերուհին էր: Այս երկու ընտանիքներն էլ հակադրաբար են վերեն վշած երկու ընտանիքներին. եթէ նրանք բարութիւնով և մարդկային ամենա՞ն կատարելութիւններով գերազանցում են մէկ-մէկու, սրանք էլ չարութիւնով և մարդկային ամենա՞ն տեսակ ստորութիւններով. մի դանաղամտութեամբ, որ Ղեռնդի կինն չէ հակապատկերն Խորիշան խանումին, այլ նման է նրան իւր բարութիւնով:

Այս առաջնակարգ գիւղական ընտանիքներին և նրանց ներկայացուցիչներին կեանքին խառն է և մի հասարակ ընտանիք, այդ է Նախրչի Մանուկի ընտանիքը, որ թէև նշանաւոր ծագումից է, բայց աղքատացած՝ նախրչութեամբ է ապրում իւր Շուշան կնոջ հետ միասին: Այս երկու աղքատ գիւղական անձնաւորութիւնների պատկերը բոլորովին կեանքից է վերցրած. սրանք «կուռածաղկի» իրական տիպարի ներկայացուցիչներից են, ինչպէս նաև Ղեռնդ աղի տան աղախին Սանդուխտը, որ իւր տիկնոջ մահանից փտոյ մարութիւն է անում Մանուշակին՝ Ղեռնդ աղի աղջկան:

Ահա այս աղջիկն է վէպի հերոսուհին, սա ինքն է բուն կուռածածաղիկը Մանուկի, աղքատ նախրչու տղի՝ Վարդի և Տէր-Յարութիւնի որդու՝ Թորոս-Ներսիսի մէջ: Մանուկի կինը անդաւակ է լինում, բայց ուխտ դնալով սր. կիրակի վանքը, մի տղայ է ունենում, որին անւանում է Վարդ:

Ղեռնդի կինն էլ, Համասփիւռ խանումը, անորդի էր: Մի օր պատահում է նախրչու կնկան սր. կիրակու ճանապարհին և լսելով նրա ուխտի կատարման պատմութիւնը, ինքն էլ ուխտ է անում և խոստումն է տալիս, եթէ իրեն աղջիկ ծնւի, տալ նախրչու տղին, իսկ թէ տղայ ծնւի՝ վան-

քական անի: Տարւայ գլխին Համասփիւռը ունենում է մի աղջիկ, որին անւանում են Մանուշակ: Այդ օրւանից Ղևոնդի կնոջ միակ փափազը լինում է հնար դանել իւր ուխտի կատարման, իսկ Ղևոնդը երբ այդ իմանում է, ախրատում է, որ այդ իրեն պատւին արատ բերող գործը զուլս չը դալ:

Ղևոնդ աղէն և Քաֆթաուենց Մելքիսէթը, Աշտարակի այս երկու չար ոգիները, զրգուում են Նրևանի սարդարի խորոթակը, խոստանալով նրան մեծ աւար, եթէ հրաման տալ զիւզը առ երևոյթս մի օրով քօչացնելու: Սարդարը համաձայնում է, որովհետև նրան խոստանում են և մի ոսկէ գութան Գեարանենց տնից չափշտակելու և իրեն պարգևելու:

Սարդարի հրամանով սկսում է քօչը, որի բոլոր պատճառած աղէտները նկարագրած են Զ. և Է. գլխներում. սրան է վերաբերում և արանչիների (գիւղի պահապանների) նկարագրերը, որ «Առուածաղկի» գեղեցկագոյն գլուխներից մէկն է: Աշտարակից տարած աւարը շատ աննշան է լինում, որովհետև Միրանաւոր եկեղեցու պահարանները պարսիկները չեն կարողանում ձեռք ձգել, իսկ ոսկէ գութանի պատմութիւնը մի փոթաբերութիւն է լինում, որի բացատրութիւնը տալիս է Գեարանենց պապը ինկերորդ գլխում, ասելով, որ երկաթէ ծալրով այն փայտէ գութանը, որ ընկած է իրենց բակում, ոսկէ գութան է կոչւում: Դաւաղիրները խալտառակում են և ընկնելով խանի ոտները՝ թողութիւն են ստանում:

Քօչից յետոյ Ղևոնդի կինը սկսում է հիւանդութեամբ հիւծւիլ, նախըրչի Մանուկին դաշտում թուրք աւազակները վիրաւորում են, նա երկար ժամանակ անկողնին է ծառայում և իւր ընտանիքը նեղ վիճակի մէջ է ընկնում, որի հետևանքն է լինում Շուշանի մահը: Ղևոնդի կինն էլ հիւանդանում է մերձ ի մահ, միայն այժմ քիչ կակողում է Ղևոնդի սիրտը, Համասփիւռը կշտամբում է նրան, խնդրում է չես կենալ իւր չար գործերից և ջանալ կատարել իւր ուխտը՝ Վարդին տալ իրենց Մանուշակին. Ղևոնդը խոստանում է, իսկ Համասփիւռը մեռնում է որբ թողնելով Մանուշակին: Ղևոնդը դառնում է գիւղի քէօխվէն, իսկ Մանուկը նրա գգիրը. երկու որբերը սկսում են խաղընկեր դառնալ: Գիւզը հանգստանում է, որովհետև Ղևոնդ աղէն թողնում է առ ժամանակ իւր չարութիւնները և սկսում պարպել իւր կալածների մշակութեամբ և գիւղի բարօրութեան հոգսերով: Տէր-Մելքիսէթը չաջող հանգամանքն հասած համարելով, կամենում է ջախջախել իւր հակառակորդին՝ Ղևոնդին, որպէս զի կարող լինի միահնծան իշխել և մենակ օգտուիլ: Սարդարը լսում է Ղարաքէչիչի ամբաստանութիւնը, Ղևոնդին տանել է տալիս Նրևան և Քալախալով պատժում. բայց սա կարողանում է ամոքել խանի սիրտը և դարձեալ իբրև իշխան դառնում է Աշտարակ:

Չար ոգին կրկին ուժով զարթնում է Ղևոնդի սրտում. երկու խթան այժմ նրան լառաջ են մղում, առաջին՝ վրէժխնդրութեան զգացումն զէպի Տէր-Մելքիսէթը, երկրորդ՝ Սարդարին հաւատարմութեան ապացուցներ տա-

յու ցանկութիւնը: Սարդարի հրամանով զօրք է հաւաքում զիւղից, պատ-  
ռելով Տէր-Մեղքիսէթի զիմակը և ցոյց տալով, թէ նա է այս դաւաճանու-  
թեան պատճառը: Զօրաժողովի ժամանակ սպանել է տալիս Մանուկին,  
բայց չի կարողանում մահացնել նրա որդուն՝ Վարդին, որին Տէր-Յարու-  
թիւնը որդեգրում է և պահում: Քիչ ժամանակից լետու Ղևոնդը բերում է  
իւր աղջկանն էլ Տէր-Յարութիւնի տունը, նրան է լանձնում որ մեծացնի,  
որովհետև աղջ խղճի խալթին չէր կամենում միշտ աչքի առաջ ունենալ:  
Երեք մանուկներն էլ՝ Վարդը, Մանուշակին և Թորոսը, որ ծնողների ցան-  
կութեամբ վարդապետ պիտի լինէր, միասին մեծանում են. նրանց մէջ զար-  
գանում է փոխադարձ սէր և ծագում են խանդի առաջին նշույնները, Մա-  
նուշակի համակրութիւնը հակում է դէպի Վարդը:

Այս մանկանց սկզբնական կրթարանի, Տէր-Յարութիւնի ուսումնա-  
րանի նկարագիրն էլ տալիս է մեզ բանաստեղծը 22-րդ գլխում: Ահա այդ  
իսկ ժամանակում պատերազմ է բացում վրաց Հերակլ արքայի և Երևանի  
Սարդարի մէջ. պարսիկներն ստիպած են լինում իրենց հպատակների,  
հայերի օգնութեան դիմելու: Սիմէօն կաթողիկոս Աշտարակցին և Գէորգ  
խալթին հաշտութիւն են կապցնում. վրաց թագաւորը հայերի համար եր-  
պատաւոր պալմաններ դնելով՝ խաղաղութիւն է կապում և դնում է էջ-  
միածին ուխտի, աշտեղից էլ Աշտարակ է դնում և հիւրասիրում է Գէորգ  
խալթի տանը:

Հերակլի Աշտարակ եղած ժամանակը՝ մանուկ Թորոս-Ներսէսը, դեռ  
8—9 տարեկան հասկում, խօսում է թագաւորի հետ և լատնում գրեթէ  
իւր սպառազ գործունէութեան բոլոր ծրագիրը, գլ. 26. եր. 152, որ շատ  
անընական է:

Վրաց թագաւորից լետու Աշտարակ այցելութեան է գալիս Սիմէօն  
կաթողիկոսը և Յուշի զիւղի թուրք մօլլան, որոնց ընդունելութիւնը ման-  
րաման նկարագրած է:

Վերջապէս որբացած Թորոսին (Տէր-Յարութիւնը քիչ ժամանակ առաջ  
մեռել էր) տանում են Էջմիածին և աշակերտ են տալիս. նա փախչում է  
վանքից և կրկին լետ է բերում: Այս առիթով Պռօշեանցը տալիս է մեզ  
վարդապետների և առ հասարակ Էջմիածնի նկարագիրը: Էջմիածնում Սի-  
մէօն կաթողիկոսը շատ հաւանում է Թորոսին, առիթ ունենալով տեսնել  
նրա անվեհեր սիրտը՝ նրա անունը փոխելով՝ Ներսէս է դնում: Ներսիսի  
վանքում եղած ժամանակ խանը գալիս է Էջմիածին, ուխտի ժամանակ  
մի աղջիկ առևանգելու նպատակով, որ Ներսիսի ճարպիկութեամբ չի լա-  
ջողում, իսկ խանը, կարիճի խալթը աստուածալին պատիժ համարելով՝  
փախչում է շուտով վանքից:

Ներսիսի տիրացութեան տարիները նկարագրութեան ժամանակ  
պատմում է Սիմէօն կաթողիկոսի մահը և Ներսիսի քանի մի մանկական  
չարութիւնները, սրա հետ միասին և նրա առաջին սէրը դէպի Մելիք-  
Աբրահամի աղջիկը: Ներսէսը այս դէպքից լետու փախչում է գիւղը:

Տէր-Մեւթիսէթը Ղևոնդին երկրորդ թակարդն է լարում, կամենալով փախցնել նրա աղջիկը խանի համար, սակայն այդ չի չաջողում Վարդի քաջագործութեամբ: Այս գիշերապին արկածի ժամանակ Ներսէսն և Վարդը ճանաչում են միմեանց լըրև արտփաններ և Վարդը չէ կամենում զիջանել Ներսիսի թախանձանքին՝ իրեն թողնելու Մանուշակին: Դէպքը կարծես օգնում է տիրացուին: Ղևոնդը թուրքերի ձեռքով Վարդին փախցնել է տալիս գիւղից և ուղարկում Տաճկաստան, ուր նա աւազակների մի խումբ է կազմում՝ հաչ գիւղացունք քրդերի ընդդէմ պաշտպանելու համար: Աջ է մ Վ ա ր դ ա ն ի անունը դող է պատճառում քրդերին և սիրտ է տալիս ընկճւած հպերին:

Աշտարակում Վարդին կորած են համարում, Գէսրգ խալֆի միջնորդութեամբ նշանում են Մանուշակին տիրացու Ներսիսի հետ, որ իւր մօր ուխտը կտորելու մեղքը քաւելու համար սը. կարագետ ուխտի է գնում:

Ճանապարհին քրդերի ձեռքից աղատում է նրան Վարդ-Վարդանքը Ներսէսը չէ ճանաչում Վարդին: Ուխտագնացութիւնից չեսող անմիջապէս տիրացուն հարսանիք է անում և մինչև պսակի օրը սպասում է իւր աղատչին, որ նոյն օրը գալիս է:

Մանուշակը հիւրերի մէջ ճանաչում է Վարդին և ուշաթափում Վարդանի սկ լինելը չափնում է: Ներսէսը վեհանձնութեամբ հրաժարում է իւր հարսնացուից և նրա փոխարին Վարդին են պսակում Մանուշակի հետ: Պառաւ Մանդուխտը տեսնում է վերջապէս իւր խօսքերի կատարումը և ասում է՝ «Մեռնեմ սը. կիրակու ոտի տակին, բաս ես որ ասում էի գրածը չի ջնջւի», (եր. 341): Վէպը վերջանում է հերոսների տապանաքարերի վիշատակութեամբ:

Արդէն վէպիս բովանդակութիւնը պատմելու ժամանակ որոշեցի ներկայացրած տիպարներն ու նրանց բնաւորութիւնները, որ ալժմ պէտք է միաչն դասաւորել:

Գաղափարական և բանաստեղծի ստեղծած օրինակելի բնաւորութիւններն են՝ Գէորգ խալֆաչ, Տէր-Յարութիւն, և այս երկուսի կանաչքը՝ Խորիչան խանումը և Սուսամբարը. սոցա նման են իրենց շրջանում Շուշանը, Նախրչու կինը, Համասփիւռն և իւր աղախին Մանդուխտը: Այս կարդին է վերաբերում և Նախրչի Մանուշակը: Պատմական անձնաւորութիւններից գաղափարացրած է Սիմէօն կաթուղիկոսի, Հերակլ վրացոց թագաւորի և Ներսիսի տիպարները: Մանուշակ Ներսէս 8 տարեկանից սկսած արդէն իբրև մի հանճար է հանդիսացրած: Ներսիսի հակառակորդը նմանապէս իդէալական տիպարի ներկայացուցիչ է. որը, աղքատ, բազ բնական խելքի և ուժի տէր Վարդը մի շատ համակրելի ներկայացուցիչ է իւր շրջանի՝ Ինքը կուսածաղիկը, Մանուշակը, թէև մանկական հասակից մինչև ամուսնանալը մեղ ներկայացրած է, բազ մի որոշեալ տիպարի աղդեցութիւն չի անում, նա անբնական է թւում մեզ:

Նրկրորդ դասակարգի, այսինքն զնասակար և չար տիպարի ներկայացուցիչները գլխաւորապէս երկուան են՝ Ղևոնդ աղէն և Փաֆթատենց Տէր-Մեղքիսէթն և իւր կիներ, որի մասին միայն լսում ենք՝ թէ չար էր, բայց ոչ մի նշանաւոր գործով չենք ճանաչում: Բուն սատանան Տէր-Մեղքիսէթն է, նա անդեղ չարն է, որ միշտ հաւատարիմ է իւր բնաւորութեան, նաև հաստատուն բնաւորութեան տէր է, ոչ մի արգելք ճրան չէ կարող փոխել, իսկ Ղևոնդը, թէև չար ձգտումներ ունի, բայց դեռ տեղի կարող է տալ լաւ զգացումներին և, եթէ խթանահարներ չունենայ, կարող է փոխւել: Նրկրորդական անձնաւորութիւնները («Վոռաժաղկի») մէջ բոլորն էլ գրեթէ բնութիւնից են վերցրած. ուստի և ամենաճիշդ նկարած բնաւորութիւններն են. իբրև օրինակ՝ վիշնք Փիլիպպոս ապէրն, Գալուստ եպիսկոպոսը, մահտեսին, սարդարը, թուրք իւզբաչին, սարվաղները և այլն:

Վէպին բարոյական գաղափարն է ու խ տ ի ս Ր Ե Ու թ իւ Ն Ը, ժողովրդի հաւատը՝ թէ գրածը չի ջնջւել և նրա հաստատութիւնը: Այնպիսի քրիստոնեաց ժողովրդի համար, որպիսին մերն է, այդ գաղափարը մեծ հրապուռ ունի և մի բուն ժողովրդական գրողի լատուկ նուրբ զգացողութեամբ գտել է այս Պաօլեանցը, որի աչքի ընկնող առաւելութիւններից ամենամեծն հէնց այդ է: Պաօլեանցը ոչ միայն ժողովրդի հետ և նրա պէս է զգում, այլ և նրա պէս է արտայայտում իւր զգացածը: Սրա հետևանքն այն է, որ նա շատ հեշտութեամբ հասնում է վիպական-իրականին (objectiv). նա, օրինակ, երազն այնպէս է պատմում և այնպէս է նկարագրում նրա հետևանքը, որ ընթերցողը չէ նկատում պատմողին, այլ կարծես ժողովրդի հետ է խօսում և իւր աչքերով տեսնում (տես գլ. 13): Ախոս սակայն, որ մեր արդէն մատնանիշ արած թերութիւնը, այն է՝ հրապարակախօսի լեզուն, ձևերն ու դարձաձեւերը բոլորովին անհետացնում են այդ զգացումը:

«Վոռաժաղկի» գրեթէ ամեն մի գլուխը սկսում է այնպէս, ինչպէս մի որևէ ալթմեան հազրագրի բանասիրական կամ առաջնորդող լուրածը: Օրինակ, երրորդ գլուխն սկսում է՝ «Հալոց ազգի պատմական վիշտակարաններին ծանօթ լինողը, նրա կրած անհամար թշուառութիւնները նկարագրիր իմաստասիրողը մեծապէս կը զարմանայ, եթէ մի հետաքրքիր հալեացք ձգի նոյն ազգի ընտանեկան կեանքին»... (եր. 11—15): Այս ամբողջ գլխում էլ ինչ բանի մասին ասես չէ խօսում—հալկական աւերակներին, քանդակներին, խաչքարերին, գիշերան և ցերեկան ժամանակի որոշման մասին և այլն: Գլուխը վերջանում է այս խօսքերով. «Այստեղ, ընթերցող, ես երեսոս խաչակնքեցի, դու էլ ինձ հետևիր»: Եթէ այս գլուխը բոլորովին հանենք, ոչ միայն չի խանգարւել վէպի ընթացքն, այլև նկատելի անգամ չի լինիլ, ընդհակառակն ալթմ կարծես մի օտար ձեռք է մտցրել այդ վէպը խանգարելու համար: Ուրիշ օրինակներ չեմ ցանկանում բերել, ցանկացողը թող կարդայ գլ. 5. Ի. (Հայաստանի համեմատութիւնը

Շվեյցարիայի և Իտալիայի հետ) ԻՆ. ԻԷ. և այլն: Պոօչեանցի («Սօս և Վարդիթերը») համեմատաբար առաւել ազատ է պապիսի աւելորդաբանութիւններէրից և ճամարտակութիւնից (Фразёрство), իսկ «Առուածաղիկ»-ն ու «Հացի Խնդիրն» ալդ կողմից մրցում են միմեանց հետ: Այսպիսի վիպական գաղափարին և պահանջին բոլորովին մնասող շատ ախօսութիւնը Պոօչեանցի ամենամեծ պակասութիւնն է, որ արդիւնք է անշուշտ նրա հրապարակախօսական ձգտումներին և պարագման, այնպէս որ, եթէ մեզ չալտնիչը լինէր թէ նա գրել է լրագիրներում, ալդ կ'եղրակացնէինք իւր վէպերից: Այս վէպով կամենում է Պոօչեանցը Աշտարակում ծնւած հալ մեծ մարդկանց «պիշատակն անմահացնելը», եթէ ուղիղ ենք հասկանում, նա ուզում է ալդ մարդկանց կեանքն ու ձգտումները մեզ ներկայացնել: Իւր ճիւթն առնում է մի աշնայիսի պատմական շրջանից, որ մի մեծ իրողութիւն էր պատրաստում. ուրեմն «Առուածաղիկ» վրայ պիտի նայինք և իբրև պատմական վէպի վրայ:

Պատմական նշանաւոր անձնաւորութիւններն են Ներսէս և Սիմէօն կաթողիկոսները և Հերակլ վրաց թագաւորը: Այս երեք անձնաւորութիւններէրից վերջին երկուսը քիչ տեղ են բռնում վէպիս մէջ: Սիմէօն կաթողիկոսը ներկայացրած է իբրև մի սրտացաւ և ժամանակի պայմանները լաւ հասկացող և ըստ աչմի վարուող եկեղեցական. նրա միայն աչն գործերն են թւած, որ մեզ չալտնի է պատմութիւնից—եկեղեցական ժամակարգութեան կանոնաւորելը, թղթի գործարանի հիմնելը և Ջամբուի յօրինելը: Բանաստեղծի երևակալութիւնը ստեղծել է միայն աչն տեսարանի նկարագիրը, ուր կաթողիկոսը հաշտութիւն է կապցնում վրաց և պարսից մէջ, որ բաւական անգոյն է. իսկ երկրորդ՝ նրա խանին ընդունելն և իւր այցելութիւնը Աշտարակ գիւղը:

Վրաց թագաւորին, Հերակլին, ևս շատ անգոյն է նկարագրել բանաստեղծը. եթէ «Առուածաղիկն» լսենք, Հերակլը միայն հալոց ազատելու համար էր եկել պատերազմի, որոնց համար քանի մի թեթևացուցիչ պայմաններ կապելով Սարդարի հետ, գնում է էջմիածին ուխտի: Բայց բանաստեղծը մի նոր տեսարան է ստեղծել Հերակլի կեանքից. աչն տեսարանն է, որ Հերակլը հանդիպում է մանուկ (8—9 տարեկան) թորոս Ներսիսին և ուր նրա հետ (․․․) խօսում է պարսից բարբարոսութեան, նըրանց վռնդելու և գաղթականութեան մասին: Խոստովանում եմ, որ այս տեսարանը ոչ արքայական է և ոչ էլ իշխանական: Հերակլը կարծես թէ մի թիֆլիսից գնացած հալ խմբագիր է, իսկ թորոսը՝ հալոց դպրոցն աւարտած և լրագրի թղթակցող մի 18—20 տարեկան պատանի:

Ուշադրութիւն դարձնենք Ներսիսի կամ թորոսի պատկերի վրայ: Ի մանկութենէ արդէն նա մեծ բաների ձգտող է, բայց որ գլխաւորն է՝ աւելի հակումն է ցոյց տալիս աշխարհական կեանքի, քան թէ հոգևորական: Թորոսի վանքում արած քանի մի մանկական չարութիւնները հաւանական

են և առնւած անշուշտ աւանդութիւններէից (վիսլչելը, կատին պատժելը), իսկ նրա հերոսութիւնները և արիական սրտի աղայցոյցները, թւանքչիններին կանչելը, առևանդող աղջկան աղատելն և այլն, թէև աղքատ, բայց ազնու ամենազնիւ ստեղծագործութիւններ են, որոնք համաձայն են ընութեան: Ներսէս տիրացուի կեանքը Աշտարակում և նրա անգործութիւնը դրեթէ անհասկանելի է, որովհետև այն մարդը, որ ապագայում անդադար և անւանց հանգստութեան գործող է, որ միշտ մեծամեծ բաների է ձգտում, չէր կարող հէքիաթներ լսելով անցնել իւր ժամանակը: Բէ՛ աղբօք պատմական աւանդութիւն է Ներսիսի նշանակը ու սուրբ կարապետ ուխտի դնալն, թէ մտացածին ինձ չալտնի չէ, միայն այսքանս ճկատելի է, որ Վարդի Վարդանանալն և Տանկաստանում քաջութիւններ անելը վիշեցնում են մեզ Աղասուն և ենթադրել են տալիս, որ այս էլ Աբովյանի հետևողութիւն է: Գալով նոյն իսկ պսակի աւուր մէջ կատարած իրողութիւններին, Ներսիսի իւր հարսից հրաժարելու և Վարդին ընծայելուն, այդ թէ անբնական է և թէ ուսմանական: Ներսէսը սիրում էր աշխարհը, հասել էր իւր ցանկացածին և այդպէս դիւրաւ հրաժարում է ամենալն ինչից և վանք է գնում:

«Առուածադիւում» Պոօշեանցը փորձում է հակառակ իւր տաղանդին, որ դէպի իրականը ձգտումն ունի, ուսմանական դառնալ, սակայն չ'ունենալով արտակարգ երևակալութեան ուժ, ընկճում է: Պոօշեանցի բոլոր ըստեղծագործութիւնների մէջ, ուր նա առօրեալ իրականից հեռանում է և ստիպւում է երևակալութեան դիմել, տեսնում ենք միշտ մի թողութիւն: Պոօշեանցը չունի հարուստ երևակալութիւն:—

Ասածներիցս հետևում է, որ այս վէպը չէ կարող իսկական պատմական վէպ համարել, որ կ'ենդանութիւն է տալիս անցեալին, ուր գործող մարդիկ մարմին, արիւն և հոգին են առնում և ժամանակը կենդանանում է: «Առուածադիւի» մասին պիտի նոյնն ասենք, ինչ ասացինք «Սօս և Վարդիթերի» և «Հացի Խնդրի» մասին. եթէ նրանց մէջ բանաստեղծը աշխատում էր տալ մեզ մի որոշեալ ժամանակի կեանքի բոլոր սովորութիւնները նկարագրելու, այստեղ էլ նա աշխատել է տալ բոլոր իւր լրած աւանդութիւնները մերձակալ անցեալի մասին, նրանց կորստից ազատելու համար: Ուրեմն եթէ առաջին վէպերը սովորութիւնների շտեմարան էին, «Առուածադիւի» — աւանդութիւնների:

Տեսնենք այժմ թէ ինչ աւանդութիւններ են մեզ աւանդածները «Առուածադիւի» մէջ և ինչ պատմական արժէք ունին նրանք: Պատմական հետազօտութեան նշույն անդամ չը կալ վէպիս մէջ. ինչ պատմական իրողութիւն պատմած է, բոլորն էլ այդ համառօտ ձևով մեզ չալտնի է. իսկ նորութիւններ են բազմաթիւ լէգէնդները (légende) և զաւէշտական պատմութիւնները (анекдоты), օրինակ, արդար Դաւթի, Քոսանգ վարդապետի, կատուների, նահատակի գերեզմանի, քէշիշ մաղա-

րու, ընկնաւորի և ալլն պատմութիւնները Այս ամենը վէպին առաւել խանգարում են, քան թէ նրան ձոխացնում:

Նդրափակելով խօսքներս, պիտի ասենք, որ «Վուռածաղկը» իբրև պատմական վէպ՝ շատ անպաշտ է, բայց իբրև ժողովրդական կեանքի որոշեալ շրջանի նկարագիր և շոնմարան նրա հաւատալիքների և սնտոիապաշտութիւնների, կարող է Պոօչեանցի միւս վէպերի շարքում երրորդ տեղը բռնել: Գալով «Վուռածաղկի» գրութեան ոճին և լեզուին, պիտի խոստովանենք, որ սա ամենից անմշակն է. էլ ինչ ասես բանաստեղծը չէ խառնում այս վէպում՝ Շվէյցարիա, Ալլազովսկի, եւրոպացիք և ալլն, իսկ լեզուի վրայ ուշք չը դարձնելով՝ գործ է դնում այնպիսի դարձածներ, որ չատուկ են մեր օրաթերթերին: Յաւում եմ, որ տեղի սղութիւնը թույլ չի տալիս օրինակներ բերել:

## Ը.

### «Շ Ա Հ Է Ն»

Կէն, ո՞րպիսի մըրիկ վտանգաւոր խորհրդներէ  
Ջարթուցանում ես դու այժմ իմ խաղաղ կըծում,  
Հողուս ներքինն ամբողջ արևին ես դարձնում...

Վել. Տէլլ. Հանդէս Ա. տեսել 2. տ. 296—298.

Պոօչեանցի այս վիպասանութիւնը վերջինն է մինչև ցարդ հրատարակածներից և իւր գրութեան նիւթով ու ոճով տարբերում է առաջիններից: Երեք նախընթաց վէպերի նիւթն առել էր բանաստեղծը Արարատեան գաւառի և մասնաւորապէս Աշտարակ գիւղի կեանքից. բոլոր ալլ վէպերի գործողութիւնն էլ կատարում էր նոյն գաւառի շրջանում, «Շահէն»-ի նիւթն ընդհակառակն առնւած է պարսկահայքից, իսկ նրա մէջ պատմած գործողութիւնները կատարում են գրեթէ ամբողջ արևելեան Ռուսաստանում, սկսած Մոսկովից մինչև Երասխ:

Նախընթաց վէպերի մէջ Պոօչեանցը նկարագրում էր գիւղական կեանքի զանազան երևոյթները, միայն բացառութեամբ և հարևանցի կերպով տալիս էր մեզ նաև երկրի Երևան և Էջմիածին նստող մարմնաւոր և հողեր վարիչների պատկերը, որ սակայն իւր նպատակի երկրորդական պահանջն էր: «Շահէն»-ում թողնում է արդէն Աշտարակն էլ, Էջմիածինն էլ, Երևանն էլ և գիւղացիներն, վարդապետներն, խաներն ու մոլրովներն էլ և նկարագրում է մալրաքաղաքի ուսանողին, կոմսուհուն, պանդոկապետին, բժշկին, հիւպատոսին և ալլն:

Բայց «Շահէնը» միայն իւր նիւթով ու գործողութեամբ կատարող հեռաւոր տեղերով չէ զանազանում իւր նախորդներից, ալլն իւր արտաքին ձևով, գրութեան ոճով է զանազանում: Առաջին վէպերի մէջ պատ-

մողը հեղինակն ինքն էր, որ առանձին վերտառութիւն ունեցող գլխնե-  
րում պատմում էր ամբողջ վէպը, «Շահէն»-ի մէջ նախ՝ գլխնեբը վերտա-  
ռութիւններ չունին և երկրորդ՝ պատմողը հեղինակը չէ, այլ նոյն իսկ վէպի  
հերոսը, թէև ինչպէս կը տեսնենք՝ շեղումներ կան:

Այս վէպի նիւթն առած է նոյնպէս մի չափոնի պատմական շրջանից  
և՛ արտեղ չիշուում են որոշեալ պատմական անձեր իրենց գործերով, ուս-  
տի և պէտք է սրա վրայ նախնք նաև իբրև մի կէս-պատմական և կէս-  
ժամանակակից վէպի տեսակետից:

Տեսնենք Ինչքան է չարդուել Պոօչեանցին իւր որոշեալ շրջանից և  
գրութեան ոճից շեղումն: «Շահէն»-ի համառօտ բովանդակութիւնն հետևեալն է:

Շահէնը, վէպի հերոսը, մի բժիշկ է. նա գտնուում էր ծառայութեամբ  
Յարսկի-Այօթոցում իբրև զինւորական բժիշկ, երբ այնտեղ է հասնում մի  
լուսանկար իւր արևստով պարապելու համար, բացի հիւանդանալով  
ստիպուած է դիմել զինւորական բժշկի օգնութեան, որ նրան տեղափոխել  
է տալիս սպաների հիւանդանոցը և մեծ գթով խնամում է: Հիւանդը սկը-  
սում է առողջանալ, բացի մի տեսակ թախիծ դեռ արգելում է նրան բու-  
րորովին կազդուրելու. բժիշկը դրա պատճառն համարում է հիւանդի հաչ-  
րեմական կարօտը, ուստի մի կերպով նրան մխիթարելու համար, հաչ վա-  
ճառականներ է ուղարկում իւր հիւանդին տեսութեան, բացի նա դարձեալ  
մնում է անմխիթար, որովհետև մի գաղտնիք էր գուշակել իւր բժշկի և-  
րեսից, որին կամենում էր անպատճառ տեղեկանալ: Բժիշկը վերջապէս  
բացուում է և սկսում է պատմել իւր պատմութիւնը:

Բժշկի պատմութիւնը սկսում է ուս-պարսկական վերջին (1828)  
պատերազմից քանի մի տարի առաջ: Սալմաստի մօտիկ Ասլանիկ գիւղում  
ապրում էր մի նահապետական ընտանիք, այն մեծ և համբաւ ընտա-  
նիքներից մէկը, որի մասին կարելի է գաղափար ստանալ միայն Հալաս-  
տանի գիւղերում: Այս ընտանիքի գլխաւորներն էին տան մեծ եղբայրը՝  
Աբրահամը և նրա կինը՝ Սալբին: Սրանք ունէին մի մինուճար որդի՝ Շահէն  
անունով, որ, հակառակ տեղական սովորութեան, դեռ չէր ամուսնացած,  
չը նախընտրէր հասակն առած լինելուն (18 տարեկան):

Շահէնի չ'ամուսնանալու պատճառն այն էր, որ նա սիրահարուած էր  
իրենց գիւղացի Սահրատի անդրանիկ աղջիկ Սուսամբարի հետ, որ ծնւել  
էր Սահրատի առաջին կնոջից՝ Մարիամից: Աբրահամը գիտէր իւր որդու  
գաղտնիքը, որովհետև գիշերները հետևում էր սիրահար գողգերի այցելու-  
թիւններին, որոնց մէկի ժամանակն էլ վիրաւորել էր ինքը Սուսամբարին  
աղատել կամենալով Սալմաստեցի մի հարուստ պարսկի Ալի և Հիւսէին  
ծառանների ձեռքից, որոնք եկել էին աղջկան առևանգելու: Դիպածն  
աճպէս էր չարդուել, որ Շահէնը կարողացել էր Սուսամբարին խել պար-  
սիկների ձեռքից և չետ բերել իւր հօր տունը: Շահէնի գաղտնիքն արդէն  
բացուած էր իւր ծնողներին, այժմ Սալբի բաջին էլ գիտէր այդ: Սակայն

ծնողները տագնապի մէջ էին, նրանք չէին կամենում, որ այդ ամուսնութիւնը տեղի ունենայ, որովհետեւ մի գաղտնիք ունէին: Մարիամը, Սահրատի առաջին կիներ և Սուսամբարի մայրը, Արրահամի և Սալբի բաջու երկուսասարդական մեղաց պտուղն էր, որին նրանք ուրիշի էին տուել իրեն զաւակ, բայց իրենք էին պսակել և միշտ խնամում էին: Շահէնին և Սուսամբարին այս գաղտնիքը չգտնուում է միայն այն ժամանակ, երբ սուսամբարին կական պատերազմից փտու պարսկահայերը գաղթում էին Լազրեֆ հայ գնդապետի առաջնորդութեամբ և Շահէնը Սուսամբարին դիշնրով փախցրել էր իւր գաղթական հօր մօտից և կամենում էր վերադարձնել հայրենիք. բայց Արրահամը վրայ հասնելով, արգելել էր թէ այդ և թէ Սալմասոցի հաջու առեւանգողների գործը, սպանելով նրանցից մէկին:

Սիրահարներն լսում են Արրահամի գաղտնիքը և հնադանդուկով ճակատագրին՝ բաժանուում միմեանցից: Գաղթական հայերը չեն գտնում Աւետեաց երկիրն Սրասիխի միւս կողմում և ըստ մեծի մասին զոհ են դնում զանազան հիւանդութիւնների. նրանցից շատերը վերադառնում են հայրենիք, սրանց թուամն է լինում և Սահրատը: Սակալն Ասլանիկ գիւղը զոհ էր եղած արդէն Սալմասոցի հաջի Սէփիդ Հասանի վրէժխնդրութեան, Արրահամը և ամբողջ իւր ընտանիքը խողխողւած էին, երբ Սահրատը գտաւ նրանց և իւր աչքերով տեսաւ Շահէնի վրիժուց գործը, Հասանի դուխը, որ Շահէնը մերձ ի մահ Արրահամին բերաւ և ցուց տաւ: Սահրատը և Շահէնը անկեալներին թողելուց փտու, անցան Ռուսաստան—Շահէնը՝ Թիֆլիս, իսկ Սահրատը՝ Թմրու: Շահէնը ծառայադառնալով Տեր-Ղուկասեանց բժշկին, գնաց Մոսկով, անտեղ սկսաւ ինքն իրեն և ապա ուրիշների օգնութեամբ ուսանել, քննութիւն տաւ Լազարեան ձեմարանում և ապա մտաւ համալսարան՝ բժշկութիւն ուսանելու: Խնամակալի մահը ստիպեց նրան ճաշակելու աղքատ ուսանողի կեանքի բոլոր դառնութիւնները և քաղցրութիւնները. նա մի առ ժամանակ ապրեց պարսկական հիւպատոսի ողորմութեամբ և փտու դասերով, որից օգուել է չիմանալով դարձեալ ընկաւ խեղճութեան մէջ: Այդ միջոցին նա ուսումնաւարտեց և ուղարկեց ժամտախտը բուժելու Ռուսաստանի գաւառներում. այստեղ առիթ ունեցաւ գտնելու մի գերմանուհի կին, որ նրան սիրում էր, բայց չ'ամուսնացաւ, իւր Սուսամբարին տաւ խոստումը պահելով և հայրենիք վերադառնալ ցանկալով՝ Շահէնը դառնում է Թիֆլիսում հռչակաւոր բժիշկ. պատահամբ կանչում են նրան Սահրատի տունը Սուսամբարին բժշկելու և ճանաչութիւն են տալիս: Այդ միջոցին արդէն Սահրատը պարզել էր Սուսամբարին Արրահամի գաղտնիքը, փայտնելով որ իւր առաջին կինը Մարիամը չէր Արրահամի և Սալբու աղջիկը, որ ծնունդից փտու շուտով մեռել էր և նրան մի ուրիշով էին փոխանակել: Ուրեմն արգելք չկար Շահէնի և Սուսամբարի ամուսնութեան և վրաւի նրանք ամուսնանում են: Շահէնը բժիշկ է նշանակուում Կուբանի հովտում. այստեղ նա առիթ է

ունենում է երբ և զաջած հալերին օգնելու իրենց ազգութեան և եկեղեցուն վերադառնալու: Այս գէպքից լետոյ նրա ծառայութեան տեղը փոխուում է և նա առիթ է ունենում, Ներսէս կաթողիկոսի միջոցով, օգնելու Ուտիացի ներին իրենց հայրենի եկեղեցուն հաւատարիմ մնալու: Շահէնը տեղափոխուում է Լակոզէի՝ իբրև զինւորական բժիշկ: Նրա ընտանիքը գերի է ընկնում Շամիլի ձեռքը և Արբանամիկ որդին Ալազան է ընկնում և կորչում: Բժիշկն անուհետև անմխիթար շարունակուում էր իւր պաշտօնը մինչև հիւանդ լուսանկարին հանդիպելը, որ աչս պատմութիւնը լսելով՝ չարտնում է թէ ինքն է Արբանամիկը, որ Ալազանից դուրս գալով ընկնում է Գնչուների ձեռքը, լետոյ Աշտարակ և ապա կրթւելով Ներսէս Ա-ի խրնամբով Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում և ճանապարհորդելով Լակոզէիւում՝ գտաւ իւր ծնողներին, որոնք չը դիմանալով այդ բուռն զգացման՝ մեռան, որոնց հետևեց և Արբանամը: «Շահէնի» վերջին գլուխն այսպէս է աւարտում: «Ախիսս, իմ ազնիւ ընկեր Արբանամն, մի շարաթ ես Յարսիկի-Վօլօղդումը նրա մօտ էի, նրա նամակն ինձ կանչեց Թիֆլիսից: Շահէնի բոլոր պատմութիւնը նա ինքը կրկնեց ինձ և իմ կռանը հողին աւանդեց»:

Այս ամբողջ պատմութիւնը, ուր բաղմաթիւ միջնալէպեր ևս կան հազգաշթակա նութեան, խաչագողութեան, ուսանողութեան, ժանտախտի, Շամիլի, Արմաւիրցիների, Ուտիացիների մասին, ունի 211 գլուխ և բովանդակւած է 262 ութածալ երեսում:

Վիպասանութիւնս իրաւամբ կոչուում է «Շահէն», որովհետև ինչքան էլ բաղմաթիւ անձեր լինին գործողութեան մասնակցողները, նրանք ամենքն էլ գրեթէ ծառայում են Շահէնի կեանքը լուսաբանելու, մինչև անգամ Սուսամբարը, վէպիս կին հերոսը, այնքան լետ է մղուում և այնքան զըժգոն է, որ հաղիւ է նկատուում: Հեղինակի մտադրութիւնն է մեզ պատկերացնել միայն Շահէնին, իսկ միւս անձերը հարևանցի են վիշաժ. միայն:

Այս վերջին տիպարներից նշանաւոր են՝ Արբանամը, Սալբին, Սահրատը: Արբանամն և Սալբին այն գիւղական ընտանիքի սիւներն են, որոնք դարերի ընթացքում հազ ընտանիքը պահել են իւր սրբութեամբ: Նրանք թէև երիտասարդական մի մեղք ունին, բայց ամենայն տանջանք պատրաստ են կրելու, որ այդ գաղտնիք մնալ և օրինակ չը ծառայի իրենց որդւոցը: Արբանամի նկարագրութեան մէջ նկատուում է անբնականութիւն և նրա Շահէնի գաղտնիքների հետևելը անհերքելի ուռման տիք կերպարանք ունի, որ անբնական է մի անպիսի ծեր նահապետի համար, որպիսին Արբանամն է: Արբանամը մի քսան և հինգ տարեկան էրիտասարդի նման կուում է Հիւսէյնի և Ալիի հետ, գնդակակոծ է անում նրանց, հետևում է և կայծակի արագութեամբ գտնում Շահէնին: Ռոմանտիք է նաև Շահէնի հաջի Սէվդի գլուխը բերելը և Արբանամի լետոյ մեռնելը: Զարմանալի մի տիպ է և Սահրատը, եթէ ասենք շահաւէր, այն ժամանակ անհասկանալի է նրա Շահէնին երկար ժամանակ պտուհը. նա աւելի մի պարզամիտ գիւղացի է և

չետոյ քաղաքացի արհեստաւոր, որ կեանքն աչնպէս է ընդունում, ինչպէս կազ և ըստ հանդամանաց փոխուում է:

Ինչ վերաբերում է բաղմաթիւ անձերի, որոնք գործող անձերին շարքումն են, նոցա մէջ առանձին տիպեր չը կան, այլ լաւաջ են բերած իբրև հանրածանօթ սովորական տիպեր, իբրև զարդարանք գործողութեան: Այսպէս են՝ Հաջի Հասանը և Նրա գործիները, Ալին և Հիւսէյինը, բօխչի Տէր-Ղուկասեանցը, խաչագողները, ուսանողները, վարվառա վասիլեանան, պանդոկապետը, դալլանչին, կոմսուհին, ուսա քահանաները, գերմանուհին և գնչուները:

Սոցանից իւրաքանչիւրն հարևանցի և քանի մի խօսքերով իրենց որոշեալ տիպն ունին, Հասանը, Ալին և Հիւսէյինը իրաւունք չը ճանաչող և քրիստոնեաների ընտանեկան սրբութիւնը պղծող, բայց և երկչոտ պարսիկներ են. բօխչի Տէր-Ղուկասեանցը, որի գործերը չենք տեսնուի, բացի Շահէնի հետ վեհանձն վարտողութիւնից, իմանում ենք, որ նա գիտուն է և ազնիւ: Խաչագողների մասին պատմելով աւանդօրէն լատնի քանի մի սխրագործութիւններ և նոցա պարապմունքն ու հալոենիքն վիշտակելով կամենում է մեզ մի պատկեր տալ նրանց կեանքի, որ շատ թոյլ է: Ուսանողական կեանքը լատնի երևում է, որ Պոսեանցը ի լրո է նկարագրում, ուստի և աչնտեղ կարդում ենք ամենայն տեսակ ուսանողական կեանքի մասին պատմած իրողութիւններ, օրինակ, նրանց խեղճ և անհոգ ապրուստի նկարագիրն և կանացի օգնութիւնները վարվառա վասիլեանաների նման լացարարներից և կոմսուհիներից: Շատ բնական է այս նկարագրութիւններից պարսկական՝ հիւպատոսի դալլանչու նկարագիրն: Շահէնի բօխչի ժամանակ պատահած անձերի նկարագիրներից նշանաւոր են՝ ուս գիւղականների, քահանայի, գերմանուհու և Սելիկեանի նկարագրութիւնները:

Բանաստեղծը թափառելով իւր հերոսի հետ ամենայն կողմն և անցնելով կեանքի շատ շերտերից՝ առիթ է ստանում աչնպէս պատկերացնելու աչք, բայց ուր նա հեռանում է իւր գիտած շրջանից, գիւղական կեանքից, ամենայն տեղ էլ ի լրո նկարագրողի տպաւորութիւն է թողնում:

Շահէնի բարոյական գեղեցիկ գաղափարն է սիրոյ հաւատարմութիւնը և հալոենասիրութիւնը: Բանաստեղծը այս վիպասանութեան մէջ մտցրել է իւր բոլոր profession de foi-ն. եթէ մէկը կամենալ իմանալ թէ Պոսեանցը ինչ է մտածում գաղթականութեան մասին, ինչ հալեացք ունի Ներսէս կաթողիկոսի և Նազրեֆ գնդապետի մասնակցութիւնների մասին պարսկական գաղթականութեան մէջ, թող կարդալ «Շահէնը»: Մինչև անգամ փորձեր է անում ազատել ու Ներսիսին դատապարտութիւնից: Աչս վէպից կարելի է տեղեկանալ և նրա կրթութեան, աղնութեան, ուսանողութեան, ընտանեկան սրբութեան, օտարի հետ ամուսնանալու, օտարացեալ հաչ քրիստոնեաներին դարձնելու և մինչև անգամ կաթոլիկ

միսխոնարներին մասին: Սակայն այս ամենը դուրս լինելով բանաստեղծութեան շրջանից, իմ կարծիքով շատ տեղ բռնադատելով են տրուում ընթերցողին և ձանձրացնել կարող են իբրև անհատական կարծիքների պաշտպանութիւն:

Այս վէպի մէջ էլ պակաս չեն միջնավէպերը, օրինակ, Թաղիադեանի նամակը, որ ամեննին ներքին կապ չ'ունի վիպասանութեան հետ: «Շահէն»-ը ամբողջապէս միջնավէպերի մի շարադարութիւն է: Պոօշեանցը ինչ լսել է ուսանողների, խաչագողների, Արմաւիրցիների և Ուտիացիների մասին վէպի ձևով կապակցել է և մեզ է տւել, ոչ կթէ նպատակ ունենալով Շահէնին մեղ ներկայացնելու, այլ առիթ ունենալու իւր լսածները և տեսածները պատմելու:

Պոօշեանցը մեղանչում է իւր ընտրած ձևի դէմ անգամ. պատմութիւնը պատմողը բժիշկն է, սակայն հեղինակը դարձեալ դառնում է ընթերցողին և ինքն է խօսում նրա հետ (եր. 71, 213), նա չէ կարողանում ընթերցողին մոռանալ:

**Թ.**

Պոօշեանցի բոլոր ցարէ հրատարակած վէպերի ուսումնասիրութիւնից հետեալ եզրակացութեան ենք գալիս: Պոօշեանցը բառի բուն նշանակութեամբ, ժողովրդական բանաստեղծ է, որ դիտէ ժողովրդի զգացումներն և կեանքը իր լեզուով և ձևով արտայայտել: Նա լաւ ճանաչում է Արարատեան գաւառի ժողովրդի կեանքը, որ և մեզ ներկայացնում է «Սոս և Վարդիթերի», «Հացի Խնդրի» և մասամբ «Առուածաղկի» մէջ. սրանով այդ վէպերը շեմարան են մեր ազգային կեանքի ուսումնասիրութեան համար: Իբրև բանաստեղծ, Պոօշեանցը չ'ունի հարուստ երևակալութիւն և մինչև անգամ աղքատ է երևակալութեամբ, բայց դրա փոխարէն շատ զարգացած է նրա գիտողութիւնը և չի շողութիւնը, որով նա իւր բոլոր տեսածներն ու լսածներն լուսանկարչական ճշգրտեամբ կարողանում է նկարագրել:

Նա իբրև վիպասան իրական ուղղութիւն ունի, բայց գտնւում է Արովեանի գաղափարական ուղղութեան աղբեցութեան տակ և տեղ տեղ ուսմանտիք ուղղութեան ձգտումներ է ցուց տալիս. սակայն երևակալութեան աղքատութիւնը բոլորովին չէ թողնում նրա մէջ այդ ձգտման զարգացումն:

Իբրև պատմական վիպասան, Պոօշեանցը շատ ստոր է կանգնած, որովհետև կեանքի ուսումնասիրութիւն չէ արել անցեալի համար, նրա պատմական վէպերի փորձերն անկենդան են և աւանդութիւնների շեմարան:

Պոօշեանցի վիպական ոճը ժողովրդական է, բայց տեղ տեղ վարդապետականի է փոխւում և շատ է վնասում նրա գործերին: Գեղարեստական ճաշակը բանաստեղծի դեռ չէ զարգացած, թէև աստիճանաբար փոփոխութիւն նկատելի է:

Լեզուն ճոխ է և ամփոփում է իւր մէջ Արարատեան բարբառի բոլոր ճոխութիւնները, արհեստ սակայն, որ հեղինակը տեղ տեղ ենթարկւում է օրաթերթերի սխալ լեզուի ազդեցութեան: